**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2**
**№ԳՀԱՊՁԲ-22-3/3-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան //.04.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Գալաջյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 02.03.2022թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-22-3/3-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 3 090 000 (երեք միլիոն իննսուն հազար) ՀՀ դրամ Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից. հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ.ք.Երևան, Միքայելյան 66 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Մետաքս մ/ճ |
| Հ/Հ 900011024537 | Հ/Հ 163218028989 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01283403 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Մ. ԳԱԼԱՋՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-3/3-2 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Ապրանքի մատակարարումը 2022թ., Ըստ եռամսյակների |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ |
| 4(20) | Տեղեկատու (Վաշտի (մարտկոցի) կրակի դիտողական քարոզչական լրակազմ.) | հատ | 15 | 140 000 | 2 100 000 | 15 |
| 5(21) | Նկարչական վրձիններ (Նկարչական և քանդակագործական միջոցներ) | հատ | 30 | 33 000 | 990 000 | 30 |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-3/3-2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկայի անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ., ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ. | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 4(20) | Տեղեկատու (Վաշտի (մարտկոցի) կրակի դիտողական քարոզչական լրակազմ.) | 22131200/501 | 2 100 000 | 2 100 000 | 2 100 000 |
| 5(21) | Նկարչական վրձիններ (Նկարչական և քանդակագործական միջոցներ) | 37821100/503 | 990 000 | 990 000 | 990 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ
Տնօրեն

Մ. ԳԱԼԱՋՅԱՆ